ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 մարտի 2026 թվականի N 1069

ԱՐՄԵՆ ԱՎԹԱՆԴԻԼՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի 11-րդ կետի, 24-րդ կետի 3-րդ, 4-րդ և 10-րդ ենթակետերի, Աբովյան համայնքի ավագանու 2024 թվականի օգոստոսի 13-ի N 111-Ն, 2025 թվականի նոյեմբերի 20-ի 178-Ն որոշումների, հաշվի առնելով Կոտայքի մարզպետի 2026 թվականի փետրվարի 13-ի N 01/03.1/01300-2026 գրությամբ (մուտք՝ 2026 թվականի փետրվարի 13-ի N Պ-474) տրամադրված լիազոր մարմնի համաձայնությունը և հիմք ընդունելով Արմեն Ավթանդիլյանի լիազորած անձ Սվետլանա Թորոսյանի դիմումը (մուտք՝ 2025 թվականի օգոստոսի 15-ի N Ք-5439).

1. Արմեն Ավթանդիլյանին պատկանող (հիմք՝ 2025 թվականի հուլիսի 30-ի N 30072025-07-0179 վկայական) Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Հատիսի փողոցի 1/32 հասցեում գտնվող 0.15683 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել որպես բնակելի կառուցապատման հողամաս:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի կառուցապատման կարգավորիչները փոփոխել բարձրահարկ կառուցապատման գոտու կառուցապատման կարգավորիչների՝ ԲՆԿԳ-4:

3. Արմեն Ավթանդիլյանը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին վճարել 161 830 (հարյուր վաթսունմեկ հազար ութ հարյուր երեսուն) դրամ՝ որպես հողամասի գործառնական նշանակության փոփոխության ծառայության վճար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Աբովյան համայնքի ավագանու կողմից հաստատվելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2026թ. մարտի 04
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

N

ՀՀ Կոտայքի մարզպետ
պարոն Ահարոն ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

2025 թվականի նոյեմբերի 5-ի N 01/03.1/10550-2025
և օգոստոսի 26-ի N 01/03.1/08085-2025 գրություններ

Հարգելի պարոն Սահակյան

ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի վարչական տարածքում գտնվող քաղաքացու սեփականությունը հանդիսացող 07-002-0116-0174 կադաստրային ծածկագրով 0,15683 հա մակերեսով հողամասում բազմաբնակարան բնակելի շենք կառուցելու համար, բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողերից բնակելի կառուցապատման հողերի փոխելու և սակավահարկ գոտուց բազմաբնակարան բնակելի կառուցապատման գոտի (ԲՆԿԳ-4) փոխելու առաջարկության վերաբերյալ հայտնում եմ, որ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 11-րդ կետը և 24-րդ կետի 4-րդ և 10-րդ ենթակետերը՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեն առարկություններ չունի:

Քաղաքաշինական հարցերի շուրջ ՀՀ քաղաքաշինության կոմիտեն իր կարծիքը կհայտնի նախագիծը պետական համալիր փորձաքննության ներկայացնելու ժամանակ:

Միաժամանակ տեղեկացնում եմ՝

1. կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես՝ ապահովելով ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

2. Հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել հաշվի առնելով ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գրությամբ ներկայացված պահանջը (կցվում է):

3. Աբովյան համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել համայնքի (Աբովյան քաղաքի) ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

4. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի (Աբովյան քաղաքի) հաստատված գոտևորման նախագծում սույն գրությունից բխող փոփոխությունները:

Կից տրամադրվում է շահագրգիռ մարմինների կողմից տրված կարծիքները:

Առդիր՝ 1 ֆայլ:

Հարգանքով՝

Восстановимая подпись

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Подписано: VARDANYAN YEGHIAZAR 2614790133 Եղիազար ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ
Լևոն Առաքելյան, /011 621 725/ կատարող Սոս Խաչատրյան, /011 621 729/